ե) Ժանրային այլ դրսևորումներ

Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության ժանրային նկարագիրն ամբողջացնող մի քանի այլ դրսևորումներ չունեն համակարգված երևում, այլ սահմանափակվում են ժանրային որոշ մասնավորությունների դրսևորումներով: Այդպիսի ժանրերից են տեսիլը, ուղեգրությունը, ձեռագրերի հիշատակարանները:

Տեսիլը միջնադարյան այն ժանրերից է, որ ազատորեն կարող է տեղակայվել ցանկացած ժանրի նկարագրում: Բայց այն առավել տարածված է վկայաբանական գրականության մեջ: Դավրիժեցին այդ ժանրի հնարավորություններից օգտվում է հիմնականում հենց վկայաբանությունների ու վարքերի համաբնագրում, ընդ որում՝ կաղապարային դրսևորումներով: Այդպիսին են բոլոր այն տեսիլները, որոնք պատկերում են նահատակի մարմնին երկնային լույս իջնելը: Տեսիլները Դավրիժեցու պատմագրքում ունեն գաղափարաբանական արժեք, թեպետ երբեմն զերծ չեն սնահավատական սևեռումներից:

Վկայաբանություններում առկա կաղապարային տեսիլներից բացի, Դավրիժեցու պատմագրքում տեղ են գտել նաև այլ բովանդակությամբ և որոշակի սյուժետիկ ընթացքով հատկանշվող տեսիլներ, որոնցով պատճառաբանվում են որոշ իրադարձություններ: Այդպես՝ «Այլ ևս պատմութիւն վասն սոյն Մեծ անապատիս» վերնագրով ԻԲ գլխում Մեծ անապատում մեծ ողբերգությունների